

ՀԱՅԵՐԷՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

16. Ձախաշերտի.

Յայտմաւորքի մէջ գործածուած ձև մըն է չամչաւերեփի կամ չամչեայ շերտի «մեծ շերտի». Հայկադեան բառ. վերի վերոյ կը մեկնէ «անօթ ջրոյ կամ քմպանակ երկայնավիզ և զրգաւ մեծ», իւր թէ ծագած չամիչ բառէն (չամիչի օշարակ խմելու շերտի): Այս մեկնութիւնը բաւական ծիծաղելի է, իւր թէ մեծ շերտիով կարելի լինէր միայն չամիչի օշարակ խմել և ոչ թէ ապուր կամ ուրիշ հեղուկ մը: Ըստ իս կը ծագի պրս. չոււչայ չամչա (տե՛հ. չամչակ) «խոր սկաւառակ» բառէն և հեւեալաբար կը նշանակէ «խոր սկաւառակի շերտի»:

17. Ձմուշի.

Ձմուշի «հողաթափ» բառը՝ որ այժմ ևս գործածական է Գորիս, Ղարաբաղ ե Շամախի, չի գտնուիր Հայկ. բառ. թէև Առձ. բառ. կը նշանակէ. կը ծագի պրս. չամշալ, չամշակ, չամշալի «հօշիկ» բառէն:

18. Պաշպամ.

«Ոտք քս փապարեօան թերևս քոյ շրջէին, և ոչ կեղեքեալ վերաւորէին պաշպան անկանելով» Վրդն. օրին: Ըստ Հայկ. բառ. անտառագ բառ է. քսալիս ե և գ տառերու շփութութեամբ յառաջացած ձև մըն է, զոր ուղղելու է պաղպան=պաղպաջ պալար, ուռեցք. վերջինիս համար հմմտ. Ապա թէ պաղպաջն սպիտակ իցէ. Սպւոյ, և պալարի և պաղպաջոյ. Ղևա. Ժ.Դ. 2, 4. 56. Պաղպաջն՝ սպիտակագոյն քերքեշտած. վանակ. հց:

19. Պարեհանակ.

Մխիթար Արքայի բառարանն ունի պարեհանակ «գծուծ և ծակոտեալ հանդերձ, կամ ոնարգ և պատառաղուռն զգեստ». այս բառը քնքնուած է Հայկադեանի մէջ, բայց Առձեռնը կը գրէ պարեհնակ «կարծ՝ խեղճ պարեգօտ»: Ըստ իս պրս. pârâhan բառն է, որ կը նշանակէ «շապիկ» և պահլաւերէնի մէջ ունի պարահան «զգեստ» ձևը (կամ նաև պերահնեց): Հայերէնին մէջ առաջին երկու վանկի ձայնաւորները տեղափոխուած են, միանգամայն մեր ձևը ստացած է ալ մասնիկը, որ այնպէս սովորական էր պահլաւերէնի մէջ:

20. Պարտիզյան.

Գամուսի արաբերէն բառարանին մէջ (տես թրք. թարգմ. Ա. Էջ. 77) կը յիշուի արաբ. bardazba «երկրագործ, հերկող» նշանակութեամբ. Գամուս կը համարէ, թէ այս բառը պարսկերէնէ փոխառեալ է: Բայց պարսկերէնի մէջ ունինք pālēzbān որ կարող չէ դառնալ bardazba. ուստի պէտք է ենթադրել թէ յիշեալ բառը արաբները մեղմէ՝ փոխ առած են: Նկատելի են մանաւանդ b, d տառերը՝ որ կը ներկայացնեն հայերէնի յետին (արեւմտեան) ձայնաշարթիւնը:

24. Պիտակ.

Հին իմաստով կը նշանակէ «թղթիկ, գրուած կամ գրելի նամակ». արեւմտեան գրականին մէջ այժմ՝ յատկացուած է ֆրանս. etiquette բառին թղթի կտոր, որ ամաններու կամ շիշերու վրայ կը կապեն՝ պարունակութիւնը գրելու համար): Թաթարերէնէ փոխառեալ բառ է. հմմտ. չաղաթայ betik «նամակ, անցագիր, վաւերագիր», թունգուզ bitik «գրուածք», բուրյաա bicik «գրուածք», թրք. pitaqa «ապրանքներու վրայ փակցնելու պիտակ»: Barbier de Meynard կը կարծէ որ այս թուրք բառը յունարէնէ կամ ֆրանսերէնէ փոխառեալ է. բայց այս կարծիքը սխալ է: Թաթարական ձևերը կը ծագին bit արմատէն. հմմտ. չաղաթայ bitmak «գրել, արձանագրել», եաքութ, bit նշան, թունգուզ bitjim գրել ևն: Մեզ նման փոխառութիւն է նաեւ քուրդերէն լիսիկ «հմայական թուղթ, նուսխայ, տլիտմ, որմէ՝ Նոր-Բայաղէտի բարբառով բթիկ անել «գիր անել»:

22. Նուագ.

Նուագ «բաժակ, գինիի գաւաթ» նշանակութեամբ կապ չունի նուագել բառին հետ, որուն սխալմամբ կցած է Հիւրըման Arm, Gram, 207: Այլ փոխառութիւն է պրս. նիֆաղ, նուֆաղ բառէն, որ կը մեկնուի «մեծ կթղայ գինւոյ, որով ի վախճան բաղմահանի խրախճանութեան լի գինի ըմպեն». հմմտ. նաեւ սոսեթերէն նուագին «խմել»: Մեղմէ փոխառեալ է վրաց, սանովագո «կերութում, ուտելիք, սնունդ», ինչպէս որ նովագի «երգ, եղանակ» առնուած է մեր նուագ «երգ» բառէն:

22. Նարմ.

Նարմ «հանգարտ, մեղմ» ծանօթ է միայն Առձեռն բառարանին. այս կաղմուած են նարմաւարժ «մեղմաշարժ» (Մ.

հաղանկ,) և գաւառական նարմանագունի ձևերը. փոխառեալ է պրո. նարմ «կահուղ, մեղմ» բառէն:

24. Յարկ.

Յարկ կամ արկ «թահարդ» գործածուած է միայն նոսնակ մէկ հատուածին մէջ. «ի վերայ ածէ և զարկն, այլ յարկն է ինչ տեսակաւ ուռեկաց թանձրաշարժ, զոր կազմեն յորդայթ արջոց և եղանց»: Փոխառեալ է յն. արկոս «թահարդ» բառէն:

25. Մուր.

Բազրուպանեանի թերթին մէջ (հատոր Ա. էջ 302-3) կարծիք յայտնած էի, թէ մուր փոխ առնուած է զանգիկ մուրքա «կեղտ, աղտոտութիւն» բառէն: Սակայն զանգիկ քր կը դառնայ հայերէն հր, ինչպէս կերեայ մուհակ բառէն, ուստի մեր բառը կարող չէ փոխառութիւն լինել: Մուր ընկի հայերէն՝ հնդկերպական բառ է. հայերի մէջ, ինչպէս Մէյքէ կը հաստատէ (Քերակ. էջ 13), հին քր-sr կը դառնայ ւր. օր. լատ. aratrum=հայ, արար=արօր. որով մուրքա ևս կը դառնայ մուր

26. Մոծակ.

Դրաբարի մէջ գործածուած չէ և գոյութիւն ունի միայն գաւառական բարբառներուն մէջ, կայ նաև կովկասեան և թաթարական շատ լեզուներու մէջ. ինչ. Ուտի մոծակ, Աւար մաչաֆ, Կիւրին միչեգ խիննալուղ միչաֆ, ինգուշ մուչաֆ, Չաղաթայ մեօչեֆ, արեւել. թրք: մուչաֆ, բուլղոս ալ «ճանճիկ կամ մոծակ» նշանակութեամբ: Կովկասեան լեզուներու այս ընդհանուր համաձայնութիւնը կը ցուցնէ, թէ բառը ընկի հայերէն չէ, այլ փոխառութիւն: Բուն հայերէնն է մօթի:

27. Միահանէր.

Անտոյգ բառ մըն է այս, որ մէկ անգամ գործածուած է Բուզանդի մէջ (2. 10). «Սոյն Յոհան Եպիսկոպոս, որդի Փառնայ, յորժամ երթայր առ թագաւորն Հայոց, խաղաղատակն լինէր նոցա ոպրէս խաղալովն զանձն իւր կրթէր յազահութեան, որում ծարաւեալ պառքեալ փափաքէր, սակայն միհահահաֆ այն էին նորա: Ի չորր անկեալ յոտս և ի ձեռս սողէր առաջի թագաւորացն: . . »: Այսպէս են Պատկանեանի և Վեներեանի 1889-ի տպագրութիւնը, իսկ Պատկանեանի ձեռագիրը, Նոր Հայկաղ. բառ. և Առձեռն բառ, ունին միահահեֆ: Վերի

Երկուքը բառս կը թարգմանեն «խաղ, կատակ», կցելով Կովկասի Հայոց հանաք բառին հետ:

Նախ նկատենք, թէ բառը յոքնակի է, սրովհետեւ եին դրուած է յողնակի. ուստի եզակի ձևն է միահանգեալ մի հանգո:—Երկրորդ՝ խնդիր է թէ ինչպէս կէտադրելու է նախադասութիւնը: Վենետեկի և Պատկանեան ապագորութիւնը վերի ձևով է, մինչդեռ Հայկազ, բառ. կը կէտադրէ այսպէս «... փափաքէր: Սահայն միահանգէր այն էին նորա, ի չորք անկեալ յոտս և ի ձեռս սողէր . . .»: Այս կէտադրութիւնը ըստ իս ուղիղ չէ, սրովհետեւ այս պարագային կսպասուէր զի «Սահայն միահանգէր այն էին նորա, զի ի չորք անկեալ յոտս և ի ձեռս սողէր»: Ուղիղ է առաջինը:

Առաջին ձևով կէտադրելով խօսքը, «հանաք» նշանակուած թիւնը իմաստ չունենար. «Ս.գահութեան ծարաւ ունէր, բայց այդ հանաք էր» անըմբռնելի է ինձ. մանաւանդ որ հանաք բառն ալ յետին քրդական փոխառութիւն մըն է, հմտ. քրդ. հեցեկ «չատախօտութիւն, անպէտ խօսքեր», բիւհեցեկ «առանց կատակի, լուրջ», հանակ «կատակաբանութիւն», հանակ կիրին «հանաք անել», հանակչի «միմոս, կատակաբան» և այլն:

Ըստ իս միահանգեալ կը նշանակէ «լուսնի, փորձանք». Բուղանդի խօսքը կը թարգմանուի այսպէս. «Յովհան ագահութեան ծարաւի էր, բայց այդ ագահութիւնը գլխուն փորձանք կը բերէր (ինչպէս այգեպանին գէպըին մէջ. Բուղ. Զ. 9)»:

Հ. Աճառեան



ՀԱԼԼԷԻ ԳԻՍԱՒՈՐԻ ՀԵՏ

ԶՈՒԳԱԳԻՊԱՆ ՀԱՄԱՆԱԲՀԱՅԻՆ ԴԷՊՅԵՐԸ.

Աչքի առաջ ունենալով այն ընդհանուր հետաքրքրութիւնը, որ զարթել է Հալլէի գիտաւորի երևան դալովը, այլ և դրա հետ կապուած այն խիստ ահաբեկիչ լուրերը, որ տարածուած են ժողովրդի մէջ, իբր թէ գիտաւորը պոչով պէտք է խփի երկրիս և կործանի կամ զանազան աղէտներ պիտի տեղի ունենան, մենք թարգմանաբար տալիս ենք յարգելի ընթերցողներին Տօյ Վերսերի նոյն գիտաւորին վերաբերեալ յօդուածը, որից իւրա-